ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

(Շտկված)

Քաղ. Երևան «01» Հուլիսի 2019թ.

2019թ-ի հուլիսի 01–ին, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով /Հակադարձ Օսմոս համակարգի ֆիլտրերի սպասարկման պահեստամասերի կոմպլեկտ/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) արտահերթ նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Տ. Ղևոնդյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ջ և ՀՄԱ-ի պետ՝ անդամ (ԳՊ/ԳԱ).
Վ. Գերոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ջ և ՀՄԱ-ի արտ. պետի շահագործման գծով տեղակալ՝ անդամ (ԳՊ/ԳԱ).
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ՝ անդամ (ԳՊ/ԳԱ).
Բ. Հարությունյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավաբան՝ անդամ (ԳՊ/ԲԱ).
Մ. Ալեքսանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի գնումների մասնագետ՝ անդամ (ԳՊ/ԲԱ).

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան Լաճիկյանը	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին ենթակետով հաստատված կարգի 26-րդ կետի 2

րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Տ. Ղևոնդյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու ծանուցման մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ՝ ՀՐԱՎԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ ս/թ. ապրիլի 30-ին ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու ծանուցում, սակայն վերջինս մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին ենթակետով հաստատված կարգի 49-րդ և 50-րդ կետերով.

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. Տիրան Լաճիկյանին՝

1) «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:
2) ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/46 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակցի որոշման նպատակով՝ որակավորման չափանիշները

հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ–ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Տ. Ղևոնդյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Գերոյան _____

Ա. Վարդանյան _____

Բ. Հարությունյան _____

Մ. Ալեքսանյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____